

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԵՎ ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԴԱՇԻՆՔԸ ԱԶԳԱՅԻՆԻ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ \***

ՀՏԴ 82.091

DOI: 10.52063/25792652-2023.2.17-108

**ՆՈՒՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի  
Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ  
գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն  
[nunemkrtyan.69@mail.ru](mailto:nunemkrtyan.69@mail.ru)  
ORCID: 0009-0006-0459-1911

**ՎԱՐԴՈՒՅԻ ԴԱՎԹՅԱՆ**

Հյուսիսային համալսարանի ավագ դասախոս,  
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն  
[varduhidavtyan@mail.ru](mailto:varduhidavtyan@mail.ru)  
ORCID: 0009-0007-3307-999X

**Հոդվածի նպատակն է բացահայտել Հովհաննես Թումանյանի և Վահան Թեքեյանի միջև ակնբախ ստեղծագործական, աշխարհայացքային սերտ առնչությունների հիմքով նրանց ընկալումների միջև առկա միասնության ճանաչողական դաշտ բերող ուղիները:**

Մեր խնդիրն է դիտարկել երկու դասականների միջև կատարվող քննությունը, որը հնարավորություն է տալիս լուսաբանելու ստեղծագործական այն ծալքերը, հոգեբանական համակարգի ընդհանրություններն ու առանձնահատկությունները, որոնք մոտեցնում են նրանց ոչ միայն գրական դաշտում, այլև ազգային խնդիրների շուրջ հասունացող մտահոգությունների տիրույթում:

Գրական առնչությունների քննությունը միշտ կա գրականության պատմության օրակարգում, սակայն պետք է նկատել, որ հատկապես Թումանյան-Թեքեյան համեմատական քննասիրությունը մեզանում աննախադեպ է, չվերլուծված:

Վերլուծական - համադրական մեթոդով ցանկացել ենք ցույց տալ, որ որքան էլ արևմտահայ և արևելահայ բանաստեղծությունները միասնական զարգացման ընթացքներում դիտվել են տարբաժանված միջավայրով, գեղագիտական հարցադրումներով, այնուամենայնիվ կան ակնհայտ զուգակցումներ, որոնք արժանի են խորքային քննության:

Կարծում ենք՝ ուսումնասիրությունը կարևոր է և արդիական. ցավոք, գրապատմական համեմատականներում բավականաչափ լուսաբանված չեն արևմտահայ և արևելահայ բանաստեղծության քնարական և էպիկական կառուցվածքները, ուստի սրանով է պայմանավորված մեր այն գլխավոր եզրահանգումը, թե նրանց գրական-գեղարվեստական միասնական

\* Հոդվածը ներկայացվել է 22.03.2023թ., գրախոսվել՝ 19.04.2023թ., տպագրության ընդունվել՝ 31.07.2023թ.:

**ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԷՎԿԵՆ ՆԱԿԱՍՏԵՂՈՒ Է ԵՐԿՈՒ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՊԵՐՍՆԵՐԻ ՆՈՐ ԲԱԳՏԱԿԱՅՈՒՄՆԵՐԻՆ:**

**Յիմնաբառեր՝** Յովհաննես Թումանյան, Վահան Թեքեյան, գրական առնչություններ, ազգային տիրույթ, գրական կապեր, աշխարհայացքի հոգեհարազատություն, արևելահայ և արևմտահայ բանաստեղծություններ, սփյուռքահայ գրող:

**Նախաբան**

Գրական կապերի, ստեղծագործական առնչությունների և փոխազդեցությունների քննությունը գրականագիտության կարևոր և հետաքրքիր հիմնախնդիրներից է: Բոլոր ժամանակներում էլ գրականագիտության մեջ առանձնացվել են գրողներ, որոնք ստեղծագործական ընդհանրություններով, գրական հայացքի, սկզբունքի ելակետերով փոխշաղկապված են եղել միմյանց: Այս առումով նկատել ենք, որ ազգային խնդիրների շուրջ ծավալվող մտահոգությունների նույնընթաց ուղղությամբ, աշխարհայացքի հոգեհարազատությամբ առանձնանում են Յովհաննես Թումանյանն ու Վահան Թեքեյանը: Նրանք ունեն միասնական ճանաչողության մեջ գեղագիտական ընդհանրություններ, ապրել են նույն ժամանակահատվածում, շփվել են միմյանց հետ ազգային և մշակութային կարևոր ձեռնարկների շրջանակում, միասնական ճանաչողության մեջ ունեցել են գեղագիտական ընդհանուր եզրեր:

**ԹՈՒՄԱՆՅԱՆ- ԹԵՔԵՅԱՆ. ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՑ**

1921 թ. Յովհ. Թումանյանը, լինելով ՅՕԿ-ի հիմնադիր ժողովի նախագահ, Երվանդ Թադևոսյանի հետ գործուղվում է Կ. Պոլիս: «Ազգի անորոշ ճակատագիրը, իրադարձությունների անկանխատեսելի զարգացումներն ու ժողովրդի շահերի թելադրանքը ստիպում են նրան ենթարկվել ընդունված որոշմանը» (Յովհաննիսյան 225-229):

Հասնելով Բաթում և մի քանի օր այնտեղ մնալուց հետո՝ «Ֆրանց ժոզեֆ» կամ «Գառնառո» շոգենավով բանաստեղծը մեկնում է Կ. Պոլիս:

Ռամկավար Ազատական կուսակցությունը մեծ ընդունելության է արժանացնում Յովհ. Թումանյանին և ի պատիվ նրա կազմակերպում թեյասեղան:

«Յինգշաբթի իրիկուն, ժամը 5-ին, Բերա, Թօքաթեանի մեջ Ռամկավար Ազատական կուսակցութեան կողմից թեյասեղան մը տրուեցաւ Յայ մեծ բանաստեղծ և Յայաստանի Օգնութեան Կօմիտէի նախագահ Պ. Յովհ. Թումանեանի» (Ժողովուրդի Ձայնը ժամանակ 1),- տեղեկացնում էր այդ օրերի պոլսական հայտնի թերթերից մեկը՝ «Ժողովուրդի Ձայնը, ժամանակ»-ը (այդ մասին գրում են նաև Կ. Պոլսի «Ճակատամարտ», «Վերջին Լուրը», «Առաւօտ» թերթերը):

Ռամկավար Ազատական կուսակցության ամենից հեղինակավոր անդամներից մեկը՝ Վահան Թեքեյանը, բարի գալուստ է մաղթում Յովհ. Թումանյանին՝ բացատրելով, թե ինչու է նա ամենից ժողովրդականը հայ բանաստեղծների մեջ: Վ. Թեքեյանը կարևորում է «ՅՕԿ-ի առաքյալի» Կ. Պոլիս ժամանումը, որի նպատակն էր կենդանի խոսքով արևմտահայ եղբայրներին բացատրել Յայաստանի ժողովրդին սպառնացող սովը: Ապա, շարունակելով իր խոսքը, ավելացնում է. «Միևեի քերթուածներէն մէկուն սկիզբը, Մուսան կ'ըսէ բանաստեղծին»:

Վինը՛դ ձեռքդ առ, բանաստեղծ  
Եւ համբոյր մը տուր ինծի:

Դուք առիք ձեր քնարը և համբոյր մը տուիք հայրենիքի Մուսային, երբ անկկա տառապանքի մէջ կը տուայտեր: Կը մաղթեմ ձեզ, որ մօտ ատենէն նոր համբոյր մը եւս տաք անոր, երբ երանութեան արշալոյսը ողջունէ զայն» (Ժողովուրդի Ձայնը Ժամանակ, «Ռամկ. Ազատ. կուսակցութեան թեյասեղանը ի պատիւ բանաստեղծ Պ. Յովհ. Թումանեանի» 1-2):

Պոլսահայերի սրտաբաց ընդունելությունը մեծ տպավորություն է թողնում Յովհ. Թումանյանի վրա: «Երբ տեսնում եմ ձեր կենդանի սերը դեպի հայրենիքը, չեմ կարողանում զսպել ուրախությունս: Այս սեղանը հավետ անմոռանալի պիտի լինի: Ես ներկաների մէջ տեսնում եմ կենդանի Յայաստանը: Շնորհակալ եմ Ռամկավար Ազատական կուսակցությանը և ձեզ ամենքիդ: Մենք եկել ենք Յայաստանի սովի և մեր հայրենիքի վերաշինության համար» (Ժողովուրդի Ձայնը Ժամանակ, «Ռամկ. Ազատ. կուսակցութեան թեյասեղանը ի պատիւ բանաստեղծ Պ. Յովհ. Թումանեանի» 1-2):

Վ. Թեքեյանը, վերջում հանուն Ռամկավար Ազատական կուսակցության խոսք առնելով, ասում է, որ եթե թեյասեղանը ճաշասեղան լիներ, իր գավաթը պիտի դատարկեր ցեղի տնականության մասին իրենց ունեցած հավատքի կենացը:

Յովհ. Թումանյանը նկատում է, որ հայ ժողովուրդը արժանի է ավելի լավ ճակատագրի, և Յայոց տառապանքը այրում է իր սիրտը ոչ միայն որպէս Յայի, այլև իբրև մարդու: Գրողը ցավով ներկայացնում է այն վիճակը, որում հայտնվել էր հայ ժողովուրդը պատերազմից հետո: «Դեռ ավելոծության մէջ ենք, և մենք՝ հայերս, դեռ լավ չենք տեսնում ու զգում են ահռելի աղետը, որին ենթարկվեցինք մեծ պատերազմի սկզբից մինչև Էսօր և որը, տարաբախտաբար, դեռ չի վերջացել: Ես ժամանակի ընթացքում հայտնվեց նաև մեր մտավորականության ընդհանուր ապիկարությունն ու, ավա՜ղ, ապականությունը, մի խոսքով, մնանկությունն ըստ ամենայնի» (Մկրտչյան և ուրիշներ 90):

Յայ ցեղը ունի դարավոր քաղաքակրթություն: Երբ 1916 թ. Թիֆլիսի մէջ իբրև Յայ գրողների ընկերության նախագահ ընդունում էր ռուս մտավորականների, նրանց հետ խոսել է իբրև հավասարը հավասարի, որովհետև ողջ ազգի քաղաքակրթական անցյալն ուներ իր հետևում: «Պետրոգրադը,- ասում էին նրանք,- հիմնված է կանաչ դաշտի վրա: Եթե իր հողը փորեք, հնագույն քաղաքակրթության որևէ հետք չեք գտնի: Բայց փորեք Յայաստանի հողը, և յուրաքանչյուր խավի տակ նոր բեկորներ կգտնեք ավելի հին քաղաքակրթության: Զանի խորագնեք այն, այնքան հին ազնվականություն կգտնեք նրա ալքերի մէջ» (Ժողովուրդի Ձայնը Ժամանակ, «Ռամկ. Ազատ. կուսակցութեան թեյասեղանը ի պատիւ բանաստեղծ Պ. Յովհ. Թումանեանի» 1-2):

Յովհ. Թումանյանի և Վ. Թեքեյանի մտահոգությունների և ոգևորությունների ակունքները նույնն էին, նույնքան տրամեցնող և նույնքան թևավորող:

Վ. Թեքեյանը, որ գիտեր արվեստն ու գրականությունը հեռու պահել կուսակցությունից, մասնակցում է Յայ Արվեստի Տան (Յայարտուն) հիմնարկեքին: Յովհ. Թումանյանի և Վ. Թեքեյանի կողմից արտահայտված բաղձանքը՝ Պոլսի հայ գրողներին և արվեստագետներին համախմբելու, նրանց մէջ ստեղծագործական որոնումների ճիգն արթնացնելու, դառնում է նախաձեռնարկը՝ արվեստի մշակման մթնոլորտ ստեղծելու: Յանձնախումբը, որ կազմված էր 12 հայտնի մտավորականներից, իր ցանկում ուներ նաև Վահան Թեքեյանին: Երկու շաբաթում կազմվում են ծրագիր-կանոնագիր և Վ. Պոլսի 34 մտավորականների և արվեստագետների ցանկը, որոնք պիտի դառնային այդ տան կորիզը (Ալպոյաճեան 270-271):

Վ. Թեքեյանը կազմակերպության Կենտրոնական Խորհրդի ատենապետն էր, որ գործուն մասնակցություն ուներ կազմակերպվելիք դասախոսություններին, արվեստի զարգացմանը նպաստող քայլերին:

Ազգային հավաքական ճակատագրի հետաանդումը երկու բանաստեղծներին հասցրեց մշակութային դաշտի՝ Վահան Տերյանի դիպուկ ձևակերպմամբ՝ «հոգևոր Հայաստանի» գերակայության:

Ոչ միայն նրանց չափածո երկերում, այլև նամակներում, հոգվածներում նկատվում է մի կողմից՝ հոգևոր Հայաստանը վերագնահատված, արժևորված, այն իր մշակութային փառքով սթափ տեսնելու տենչն ու սպասումը, մյուս կողմից՝ հանդես գալիս ազգային հոգևոր բարձրագույն արժեքների անվախ ու անկողմնակալ պաշտպանությամբ՝ ժողովրդի փրկությունը կապելով զարգացած, լուսավորված կյանքի՝ հոգևոր Հայաստանի հավերժական գոյության հետ:

Ազգային հավաքական ճակատագրի և մշակութային հոգևոր դաշտի միջև ներքին միասնությունը մեծ մասամբ ավանդական բանաստեղծության մեջ ընթացել է ազգային ողբերգության, առարկայացած ցավի, հայերնիքի ուղղագիծ շեփորման հայտնի ճանապարհով: Այնինչ մեր նշած միասնության մեջ առաջին հերթին տեսնում ենք Հովի. Թումանյանի և Վ. Թեքեյանի գրական եղբայրակցությունը:

Վ. Թեքեյանը ընկալում է հայրենիքի առարկայական, այսրոպեական սիրո և ազգային պատմության ճշմարիտ շերտերի ընկալման ներթաքույց տարբերությունները: «Երեք ձօն» շարքում ազգային երգի պարտադրանքը նա լուծում է թումանյանական «բարձրից» եկող սկզբունքով: Շարքի երկրորդ՝ «Հայ ազգին» քերթվածում, Վ. Թեքեյանը ազգային բանաստեղծից պահանջածը դիտում է որպես յուրատեսակ, իր իսկ բառերով՝ «մարդակերի» ներկայացվող զոհաբերություն, ուր «մարդակերը» հայրենիքի անընկրկելի պահանջն է բանաստեղծից՝ հայրենասիրական երգերի առումով, որի գայթակղությունից հեռու չի կարող մնալ նաև իր գրիչը:

Ո՛չ, գիտեմ, չե՛ս ըսպասեր, չսպասեցի՜ր դուն երբեք  
Ուրիշ բանի բայց եթե զաւակներուդ քեզ համար  
Տառապանքին, հեծութեան, գալարումին վշտաբեկ...:

Ա՛ն և նետե՛, մարդակե՛ր, մոռացումի վիհն ի վար  
Այս մասնիկներն այ սրտի մ՛որ ամեն օր հիւծեցաւ  
Քեզ և ինքզինքն իր վըրայ ծանրակրելո՛ւն պատճառաւ...:

Եվ դա ճիշտ և ճիշտ նույնանում է Հովի. Թումանյանի զգացողություններին, առաջին հերթին՝ «Հարենիքիս հետ» հռչակավոր բանաստեղծությանը, որտեղ Ամենայն հայոց բանաստեղծը հայրենիքի քաղաքական ճակատագրի հարցադրումներին մոտենում է կարծես ականա պարտադրանքով, քանի որ ինքը վերացած է այլ ոլորտների մեջ՝ անհուն, Անհայտ և հեռու:

Վաղուց թե՛ն իմ հայացքը Անհայտին է ու հեռվում  
Ու իմ սիրտը իմ մտքի հետ անհուններն է թափառում...

Կարելի է նկատել, որ «մարդակերը» թումանյանական պարտադրության ավելի կոպիտ արտահայտությունն է Վ. Թեքեյանի քերթվածում: Թեև Վ. Թեքեյանը տողերի մեջ նետում է հեզնախառն մտքեր, անթաքույց է արվեստագետի տանջող ցավը, որը գուցե տվյալ պահին այնքան էլ հարազատ չէ «անցորդներուն անծանօթ», ինչպես ասվում է «Ընթերցողին» բանաստեղծության մեջ:

Ընդ որում, նկատենք, որ Հովի. Թումանյանի և Վ. Թեքեյանի համար ստեղծագործական տարերքի ուղղություն ընտրողը դառնում է Հոգին:

Իմ բարի սրտի Էն մեծ խոհերից,  
Էն մեծ խոհերի անհուն խորերից  
Կամեցավ ելավ իմ հզոր հոգին,  
Որ բարձրից նայի աստծու աշխարհին:

Վ. Թեքեյանը հետևում է կառուցողական այս հնարանքին՝ գեղարվեստական գրեթե նույն խնդրառուությամբ:

Հոգիս այդ հանքն է հիմա՝ զոր բացած եմ ու պահած  
Եւ ո՞վ գիտէ դեռ որքան այսուհետեւ նոր վիշտեր  
Պիտի պեղեն ու փորեն զանի հարուած առ հարուած...

Երկուսի մոտ էլ Հոգին դրսևորում է իր «վարքագիծը» ողբերգականության, թռիչքի ու անկման բարձր տեսողության մեջ:

Մեկ այլ պատկերային կառույցում Վ. Թեքեյանն արդեն ազգային ենթահողի վրա քննում է Հոգու մեկնության խնդիրներ՝ թումանյանական զորությամբ: Խոսքը վերաբերում է «Հայու Հոգին» անզուգական բանաստեղծութեանը:

Ի՞նչ է Հոգին, Հայու՛ Հոգին՝ կը հարցնենք դեռ, աւանդ,  
Ու կը գտնենք զայն ցեխի մեջ կիսաթաղ...

Փորձելով բացահայտել ազգային ոլորտում Հոգու խորհուրդը՝ Վ. Թեքեյանը ցույց է տալիս, որ անգամ ցեխի մեջ կիսաթաղ Հայու հոգին մնում է մաքրամաքուր և սուրբ: Նմանապես Հովի. Թումանյանի «Հայոց վիշտը» բանաստեղծության մեջ, որը գրել է շատ ավելի վաղ (1902), վշտի ծովում լող տվող բանաստեղծի հոգին իր մեջ ունի համայն հայության տառապանքի խորհուրդը:

Հայոց վիշտը անհուն մի ծով,  
Խավար մի ծով ահագին,  
Էն սև ծովում տառապելով  
Լող է տալիս իմ հոգին...

Վ. Թեքեյանի ձևակերպմամբ՝ ցեխի մեջ ընկած, բայց անդադար կռվող ու մաքառող Հայ հոգին «վշտի ծովում լող տվող» թումանյանական Հոգու գեղարվեստական պատկերի երկրորդումն է, բզկտված հայրենիքի խորհրդանշական կերպարը:

Շարունակելով երկու բանաստեղծների մոտ Հոգու, Հովի. Թումանյանի ըմբռնմամբ՝ «ոգու» գեղարվեստական քննությանը վերաբերող գեղագիտական մտակառույցների զուգահեռները՝ նկատենք, որ և՛ Հովի. Թումանյանը, և՛ Վ. Թեքեյանը ունեն հոգու բազմաչափար և հայածված լինելու ընկալումը: «Հայու Հոգին» նշանավոր քերթվածում Վ. Թեքեյանը ցավով խորհում է.

Եւ այդ յոյսին, այդ յոյսի՛ն մեջ կը տեսնեմ  
Բացուած ընդդէմ ովկեանին ժանտաղէմ,  
Հայ Հոգիին հողմակոծ ծա՛ռը վըսեմ...

Հովի. Թումանյանը իր հողվածներից մեկում խոսում է հոգու այն անլուրի մռունչի և չդադարող ցավի մասին, որը տանջում և տառապեցնում է. «...Կրակված սիրտն է, որ այրվում է երկիրը բռնած, տանջված հոգին է, որ մռնչում է մինչև երկինք» (Թումանյան 120):

Ազգային դաշտում Հովի. Թումանյանը շարունակում է հայ հոգու (ոգու) փնտրտուքը: 1910 թ. նա գրում է «Հայ ոգին» փիլիսոփայական հարցադրումներով հագեցած հողվածը՝ փորձելով պատասխանել բոլոր ժամանակների հայ արվեստագետների առաջ ծառայած հարցին. «Ո՞րն է էս ժողովրդի պատմական ճանապարհը, սրա գոյության խորհուրդը, ի՞նչ է կամենում սա, սրա ոգին: Եվ ո՞ր որոնենք այդ ոգին...» (Թումանյան 92):

Յովի. Թումանյանը գտնում է պատասխանը. պետք է որոնել ազգային-մշակութային արժեքների անդաստանում, հին վանքերի միստիկ կամարների տակ, նարեկացիական խոսքի երկնաչու պաղատանքների մեջ, «հայրենասերի ողբի» հառաչաքներում ու մորմոքների մեջ:

Վ. Թեքեյանը, բացահայտելով ազգային ինքնության, ֆիզիկական Յայաստանի բացակայության դիմաց «հոգևոր Յայաստանի» խորհրդանիշները, կարևորում է դրանց խաղացած դերը հոգևոր անդաստանում: Վ. Թեքեյանը առաջիններից մեկն էր, որ իր հայերգության մեջ համախմբեց այդ խորհրդանիշները՝ լեզուն, եկեղեցին, պատմությունը՝ որպես ազգային դիմագիծը մեկնող հոգևոր բարձրագույն արժեքներ: Ինչպես նկատում է գրականագետ Սուրեն Դանիելյանը, և՛ Յովի. Թումանյանը, և՛ Վ. Թեքեյանը ուզում են «սեղան նստել» աշխարհի մեծերի հետ, խոսել հավերժական, բարձր, առիվնող զգացումներից, այն, ինչ մնայուն է, այն, ինչ եղբայրացնում է աշխարհի տարբեր ծայրերում ապրող ու տառապող բանաստեղծներին: «Բայց հայրենիքի վիշտն ու սրուած զգայնությունը բթացնում են միև, թեկուզ վեհագոյն զգացումների ուժգնությունը...» (Դանիելյան 198):

Վ. Թեքեյանը միշտ Սփյուռքի հայ մարդու հետ է, նրա հույզերին և խոհերին հաղորդակից: Դառնալով ազգային մտքերի և դեգերումների մեկնիչը՝ նա փորձեց բացահայտել սփյուռքահայի համար հույսի և հավատի երաշխիք դարձած Լուսավորչի կանթեղի գորությունը: 1911 թ. նա գրեց «Լուսավորչի կանթեղը» քերթվածը, ավելի վաղ՝ 1903 թ., Յովի. Թումանյանը գրել էր «Լուսավորչի կանթեղը» բալլադը:

Գրականագետ Վարդուհի Դավթյանը կարծում է, որ Յովի. Թումանյանի բալլադը ազգային-քաղաքական, ինչպես նաև գեղարվեստական տեսակետից անհամեմատ բարձր է. «Նրա համար (իմա՝ Յովիաննես Թումանյան.-Մ. Ն.) կարևորը իրական եկթահողն է, իսկ Վ. Թեքեյանի մոտ ընդգծված է վերացականը, ուր խտացված է ոչ միայն ժողովրդի հավերժական գոյության, ապագայի հանդեպ անխաբ հավատի տրամադրությունը» (Դավթյան 125):

Այդպէս հաւտաց ու այդպէս դեռ կը հաւտայ հայ հոգին՝  
Որ միշտ դարձաւ, նայեցաւ և յառեցաւ անձկագին  
Առտո՛ւն ձիւնոտ Մասիսին, ու գիշերներն այլ անո՛ր...

Յովի. Թումանյանը պատմության հանդեպ ցուցաբերում է մշտատև հետաքրքրություն, իսկ Վ. Թեքեյանի պարագայում գնահատում ենք մի նուրբ մասնավորում՝ քրիստոնեական հավատի ուժի շեշտադրությունները՝ համահայկական խորհրդով, երկու սրբությունների՝ Արարատի և Արագածի խորհրդանշական միախմբումով:

Լուսավորչի կանթեղի հրաշալի ավանդությունը այդ հավատի և հայացքի ազդարարն է Վ. Թեքեյանի քերթվածում:

Ան կանթեղն է՝ լոյս առած Լուսավորչէն Յայութեան,  
Անկէ լցուած, անոր ջինջ արտասուքէն՝ իւրի տեղ,  
Պլպլացող քաղցրութեամբ, պլպլալիք միշտ կանթեղ:

Լուսավորչի արցունքը հավատի այն սրբասուրբ յուղն է, որի խորհուրդը ձեռք է բերում ավելի մեծ նշանակություն, այն Սփյուռքում ապրող հայ մարդու համար հայկականության պահպանման սրբազան գինն ունի, իր մեջ թաքցնում է ժողովրդի հարատևության չմարող գաղտնիքը, որին իր ողջ եռությամբ ապավինում է նաև սփյուռքահայ բանաստեղծը.

Այդպէս և էս, ո՛վ Մեծ Սուրբ, հաւատարձարձ կանթեղիդ,  
Ըզգացի թէ հոգւոյս մէջ կը ծագեր շո՛րը վըճիտ,

Եւ կը մեծնար, կը մեծնար, մինչեւ կ'ըլլար Այգ մը նոր...:

Ավանդության և խոհի շաղախը կարևոր է այստեղ, որը ձեռք է բերում փիլիսոփայական կայունացած շեշտ: Թումանյանական ընկալմամբ՝ այն Աստծու պայծառ աչքն է, որը հսկում է երկնքից ցած՝ լի սիրով և անսասան հավատով՝ ուղղված Հայոց վառ ապագային:

Ցավոք, ազգային ճակատագրի հետ կապված երբեմն մռայլ և հոռետեսական տրամադրությունները երկու բանաստեղծների մեջ առաջ են բերում վիատություն: Ազգային ցավը և տառապանքը երբեմն մղում են Նրանց անհաշտ լինելու Աստծու հետ, համարձակվելու կասկածի տակ դնել նար գոյությունն ու արդար լինելու հանգամանքը: Դեռևս 1891 թ. Հովհ. Թումանյանը «հանդգնեց» իր «Կանչ» բանաստեղծության մեջ ընդվզել Աստծու դեմ, ապա՝

Եթե կաս աստված  
Եվ չես ստեղծել  
Արտասուք ու լաց...

Նախահարձակ տողերից հետո գայթակղության նժարին դնել նրա սկզբունքայնությունը.

Դե արի ու տէ՛ս,  
Չարկի՛ր ու շանթի՛ր,  
Եթե աստված ես  
Դու վրեժխնդիր:

Վ. Թեքեյանը նույն տարածությունն է փնտրում իր և Աստծու միջև «Միջնորդություն» և «Պիտի ըսենք Աստծոյ» քերթվածներում՝ ընդգծելով Աստծու անտարբերությունը և ապաժամ շնորհը հայ ժողովրդի հանդեպ:

Ըսե՛ք, ով դուք, եթե չեք զգուած ձենե ու մենե  
Եւ կայ Աստուած մը եթե քառսին վրայ մեր կեանքին,  
Ըսեք Անո՛ր, թե՛ հերի՛ք, ա՛լ այս պատիժս հերի՛ք Ե...-

զսպված գայրոյթով գրում է Վ. Թեքեյանը «Միջնորդություն» բանաստեղծության մեջ, իսկ 1917 թ. «Պիտի ըսենք Աստծոյ» քերթվածում ուշացած համարում աստվածային սփոփանքը.

Որ հանդերձեալ կեանքին մեջ երբոր գտնենք մենք զԱստուած  
Ու երբոր Ան՝ երկրային մեր մեծ ցաւին փոխարեն,  
Ուզե՛ք ըզմեզ ըսփոփել, վարձահատո՛յց մեզ ըլլալ...,  
Իր այդ շընորհն ապաժամ մենք մերժելով ուժգնօրեն՝  
Պիտի ըսենք.- «Մեզ դըժոխք, դըժոխք դրկե՛ անգամ մ'ալ...»:

Բայց դա չի նշանակում, որ Հովհ. Թումանյանն ու Վ. Թեքեյանը չարախնդորեն են ըմբոստանում Աստծու դեմ: Նրանց մոտ նյութը ստանում է փիլիսոփայական ուղղություն՝ նախընտրելով մարդ-մահկանացուից դեպի Աստված տանող բարձրընթաց վերելքը:

Այստեղ կարևորվում է ուշագրավ մի հանգամանք, որը սկիզբ է առնում հոգուց և բանաստեղծի միջոցով հանգում Աստծուն: Սա ևս մեկ ապացույց է Հովհ. Թումանյան և Վ. Թեքեյան բանաստեղծների գրական համակարգերի դաշինքի և հուշում ազգային դաշտում առնչությունների այն եզրերը, որոնք բացում են Աստծու և

Արվեստագետի հոգևոր հաղորդակցումը, այն ամենատես կապը, որը ենթադրում է Աստծու հովանավոր Աջ, հոգու բացահայտած ուղղություն՝ հասնելու Կատարյալին: Հովի. Թումանյանը իր քառյակներից մեկում կյանքի խորհուրդը բացահայտող մարդու իմաստուն հայացքով ծանրութթա է անում իրեն մնացածը և տալիքը:

Ինչքան ծաղիկ պիտի բուսեր, որ չբուսավ էս հողին,  
Ի՞նչ պատասխան պիտի ես տամ հող ու ծաղիկ տվողին:

Քիչ ավելի ուշ Վ. Թեքեյանը «Երեք ձօներ»-ից առաջինում «Աստուծոյ» հնչակում, փորձում է փիլիսոփայորեն արժևորել անցյալը: Բանաստեղծը մենախոսում է Բարձրյալի հետ՝ կամենալով ընծայաբար վերադարձնել այն, ինչ պատկանում է Աստծուն:

Ինչ որ տուիր՝ կը դարձնեմ զայն Քեզի,  
Ահա՛, Աստուած... Օրորոցիս բարձին տակ  
Հունտեր դըրիր, ու ես զանոնք ցանեցի  
Եւ ահ՛ա հունձքն՝ երկու ափիս մեջ պարփակ...  
.....

Շատերն երբեք չըծաղկեցան՝ բայց ոմանք  
Այդ հունտերէն գարնան առտու մը ծըլան,  
Եղան ոստեր ու կապեցին դըրասանգ  
Տունիս ճակտին, ու խամրեցան այս աշնան...:

### Եզրակացություն

Երկու բանաստեղծների մոտ էլ ընդգծված է խոհի փիլիսոփայական շերտը, ինչը արդեն գրողական խառնվածքի խնդիր է և բոլորովին էլ՝ ոչ երկրորդական:

Հովի. Թումանյանի և Վ. Թեքեյանի բանաստեղծության հայրենասիրական որակը թանձրանում է առաջին հերթին հոգու և պատմության փիլիսոփայական ընկալման ճանապարհով: Նրանք փորձում են իմաստավորել անցյալը, բացահայտել հայրենիքի սիրո ակունքները: Սրանցից էլ ծնվում են բանաստեղծների խոհերը, որոնք դառնում են այսօր՝ 21-րդ դարում, այնքան արդիական դարձած Սփյուռքի և Հայրենիքի նժարների յուրատեսակ հավասարակշռության նախապայման:

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավայաճեան, Արշակ, *Վահան Թեքեանի իբրեւ հակրային մարդ և հրապարակագիր*, Պէյրուօ, 1988:
2. Դանիելեան, Սուրեն, *Սփիւռքահայ գրականութեան նուաճումները և զարգացման միտումները (1920-1960-ական թ.թ.)*, Երեւան, 2015:
3. Դավթյան, Վարդուհի, *Թեքեյան-Տեղյան գրական առնչությունների շուրջ*, Երևան, 2017:
4. Թումանյան Հովհաննես, *Երկերի լիակատար ժողովածու*, հ. 4, Երևան, 1969:
5. «Ռամկ. Ազատ. կուսակցութեան թէյասեղանը ի պատիւ բանաստեղծ Պ. Յովի. Թումանեանի», *Ժողովուրդի Ձայնը ժամանակ*, շաբաթ, 30 հոկտեմբեր, 12 նոյեմբեր, 1921, թիւ 942, Դ. տարի, Պոլիս:
6. Մկրտչյան, Նունե, Վարժապետյան, Իրիտա և Մնացականյան, Եվա. *Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն/1920-1923/*, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2020:
7. Հովհաննիսյան, Սուսաննա. *Պատմություններ Հովի. Թումանյանի կյանքից*, Երևան, 2010:



**WORKS CITED**

1. Alpoyadjyan Arshak, *Vahan Tekeyan ibrev hanrayin mard u hraparakagir [Vahan Tekeyan as a Public Figure and a Publicist, Beirut]* (in Western Armenian)
2. Danielyan Suren, *Spyurkahay grakanutyanyan nvacumnern u grakan mitumnern 1920-1960 [Achievements of Diaspora Literature and Development Values 1920-1960, Yerevan]* (in Eastern Armenian)
3. Davtyan Varduhi, *Tekeyan-Teryan grakan arncutyunneri shurj [On Tekeyan-Teryan Literature Relationship, Yerevan]* (in Eastern Armenian)
4. Hovhannisyan Susanna, *Patmutyunner Hovhannes Tumanyani kjankic [Tales about Hovhannes Tumanyan Life, Yerevan]* (in Eastern Armenian)
5. Mkrtchyan Nune, Varjapetyan Irita and Mnatsakanyan Eva, *Hovhannes Tumanyani kyanki ev stexagorcutyan taregrutyun, [Chronicle about Hovhannes Tumanjan's Life and Creation, Yerevan]* (in Eastern Armenian)
6. Joxovrdi dzayn, *Jamanak [Voice of Nation, Time week, Polis]* (in Western Armenian)
7. Tumanyan Hovhannes, *Erkeri liakatar joxovacu [Whole Collection of Novels, Yerevan]* (in Eastern Armenian)

**THE ALLIANCE OF LITERARY SYSTEMS OF HOVHANNES TUMANYAN AND VAHAN TEKEYAN IN THE NATIONAL DOMAIN**

**NUNE MKRTCHYAN**

*Academy of National Sciences of the Republic Armenia, Institute of Literature after Manuk Abechyan, Senior Scholar, Ph.D. in Philology, Associate Professor, Yerevan, the Republic of Armenia*

**VARDUHI DAVTYAN**

*Northern University, Senior Lecturer, Ph.D. in Philology, Associate Professor, Yerevan, the Republic of Armenia*

The current article aims at revealing the ways of displaying the unity of the perceptions, based on obvious close creative and worldview relations between Hovhannes Tumanyan and Vahan Tekeyan, in the cognitive field.

Our task is to dwell on the scrutiny between the two classics, providing an opportunity to elucidate the creative folds, commonalities and features of the psychological system, which bring them closer not only in the literary field, but also in that of maturing concerns about national issues.

There is always an examination of literary relations on the agenda of literary history, but it should be noted that the Tumanyan-Tekeyan comparative study is unprecedented and unanalyzed.

Using the analytical-comparative method, we have made an attempt to state that though West-Armenian and East-Armenian poems were viewed in a divided environment in the course of their joint development, there are still obvious combinations that deserve a deep examination in terms of aesthetic issues.

We hold the opinion that the study is important and actual; unfortunately, the lyrical and epic structures of West-Armenian and East-Armenian poems are not sufficiently disclosed in the literary-historical parallels. Thus, our main conclusion is accounted for by the fact that their joint literary-artistic examination will significantly contribute to new discoveries of the creative relations of both poets.

**Key Words:** *Hovhannes Tumanyan, Vahan Tekeyan, Literary contacts, National site, Literary relations, World-Outlook familiarity, West-Armenian and East-Armenian poems, Armenian Diaspora Writer.*

## **ОБЩНОСТЬ ПОЭТИЧЕСКИХ СИСТЕМ ОВАНЕСА ТУМАНЯНА И ВАГАНА ТЕКЕЯНА В ПРОСТРАНСТВЕ НАЦИОНАЛЬНОГО**

**НУНЕ МКРТЧЯН**

*старший научный сотрудник Института литературы имени Манука Абебяна  
Национальной академии наук Республики Армения,  
кандидат филологических наук, доцент,  
г. Ереван, Республика Армения*

**ВАРДУИ ДАВТЯН**

*старший преподаватель Северного университета,  
кандидат филологических наук, доцент,  
г. Ереван, Республика Армения*

Цель статьи – выявление путей приведения в познавательное поле единства восприятия Ованеса Туманяна и Ваана Текеяна на основе имеющейся между ними очевидной тесной творческой и мировоззренческой связи.

Наша задача – рассмотреть разногласия между двумя классиками, позволяющие выявить творческие нюансы, общность и особенности психологической системы двух поэтов, которые сближают их не только в литературном поле, но и в части возрастающей озабоченности национальными проблемами.

Изучение литературных связей – постоянно востребованный аспект литературного процесса, но следует отметить, что сопоставительное исследование литературных связей Туманян-Текеян на сегодняшний день беспрецедентно и абсолютно ново.

Используя аналитико-сопоставительный метод, мы сделали попытку показать, что, хотя западноармянская поэзия и восточноармянская поэзия в совместно протекающих процессах развития и рассматривались отдельно, тем не менее, с эстетической точки зрения между ними существуют очевидные параллели, заслуживающие более глубокого изучения.

Полагаем, что исследование является важным и актуальным. К сожалению, при литературно-историческом сопоставлении лирико-эпическая структура произведений западноармянской и восточноармянской поэзии оказывается недостаточно освещенной: этим и обусловлен наш главный вывод о том, что параллельное литературно-художественное изучение аспектов творчества двух поэтов в значительном мере поспособствует новым открытиям в сфере их творческих взаимосвязей.

**Ключевые слова:** *Ованес Туманян, Ваган Текеян, литературные связи, национальная сфера, литературные отношения, близость мировоззрений, восточноармянская и западноармянская поэзия, западноармянский писатель.*